ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1959 Общественные науки

Լ. Դ. Խայերյան

ՉԱՓԻ ՊԱՐԱԳԱ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասական հայերենը երկրորդական նախադասությունների իր շարահյուսական համակարգում ունի գործողության մեծ ոլորտով հանդես եկող չափի պարագա երկրորդական նախադասությունների կատեգորիա, որն իր քերականական ձևավորմամբ և իմաստային երանգներով տարբերվում է պարագա նշող մյուս կատեգորիաներից։ Չափի պարագա երկրորդական նախադասությունների շարահյուսական պաշտոնն այն է, որ նրանք նկարագրում և պարզաբանում են գլխավոր նախադասության գործողության հանգամանքները՝ քանակի կողմից, չափի և աստիճանի հարաբերությամբ։ Շարահյուսական հիմնական այս ֆունկցիան կատարելով հանդերձ, նրանք ամբողջ բարդ նախադասությանը հաղորդում են նաև իմաստային բազմապիսի երանգներ։ Իմաստային այդ երանգների առկայությունը նպաստում է առավել վառ և հստակ կերպով բնորոշելու գլխավոր նախադասության գործողության բնույթը չափի ու քանակի տեսակետից, մարդկային մտածողության մեջ բեկվող օբյեկտիվ իրականության բարդ և նրբին հարաբերություններ դրսևորելով։

Սակայն մեր հայ քերականագետները, ելնելով այն հանգամանքից, որ չափի պարագա (ինչպես և ձևի պարագա) երկրորդական նախադասությունները միաժամանակ դուգահեռաբար դրսևորում են նաև շարահյուսական հարակից իմաստներ, պարագայական նախադասությունների իրենց դասակարգման մեջ իմաստային այդ երանգները համարել են առանձին տարատեսակներ և ըստ այդմ էլ խմբավորման ենթարկել։ Այսպես, Ստ. Պալասանյանը «Որակական նախադասություններ» ընդհանուր վերնագրի տակ քննում է իր կողմից «բուն որակական» և «համեմատական»[1] հորջորջվող երկրորդական նախադասությունները, ըստ որում «բուն որակական» անվան տակ հասկանում է անցյալ դերբայը և անորոշ դերբայը իրենց կողմնակի անդամներով փբրև ձևի պարագա երկրորդական նախադասություններ։ Մինչդեռ դերբայական այդ դարձվածները թեև գլխավոր նախադասության ձևի պարագայի պաշտոն են կատարում, սակայն ամենևին երկրորդական նախադասություն չեն հանդիսանում. դրա պատճառն այն է, որ նրանք զուրկ են ստորոգումից։ Իսկ «Համեմատական նախադասություններ» ստորաբաժանման տակ Պալասանյանը քննության է առնում «քանակական» և «որակական» երկրորդական նախադասությունները միասնաբար[2], այլ կերպ ասած՝ չափի և ձևի պարագաների այն տարատեսակները, որոնք իրենց հիմնական շարահյուսական պաշտոնները կատարելով հանդերձ օժտված են նաև համեմատության իմաստային երանգով։ Այդ նշանակում է, որ Պալասանյանի համար չափի (ինչպես նաև

[1] Տե՛ս Ստ. Պալասանյան, Գործնական քերականություն հայերեն լեզվի, Թիֆլիս, 1874, էջ 91։

[2] Նույն տեղում, էջ 92։

ձևի) պարագայի կառուցվածքային տարբեր տիպերը խմբավորելիս դասդասման հիմք են ծառայել շարահյուսական հենց այն զուգահեռ, հարակից իմաստային երանգները, որոնցով առհասարակ երանգավորված են լինում չափի (ինչպես և ձևի) պարագա երկրորդական նախադասությունները։

Ակադ. Ստ. Մալխասյանը խնդրո առարկա հարցի մշակման ուղղությամբ առաջնորդվում է նույն այն սկզբունքով, ինչ Պալասանյանը, լիովին համերաշխվելով նրա տեսակետին, և առավել ևս կոնկրետացնում ու սիստեմավորում է այդ բնույթի երկրորդական նախադասությունները՝ հատկացնելով նրանց միայն նոր տերմիններ։ Ակադ. Մալխասյանը «Ոդանակական պարագայական նախադասություն» ընդհանուր հայտարարի տակ քննում է չափի և ձևի պարագա երկրորդական նախադասությունները միասնաբար և ենթարկում դրանք երեք ստորաբաժանումների՝ ա) «Նկարագրական» (սրա տակ հասկանում է գլխավոր նախադասության մեջ իբրև ձևի պարագա հանդես եկող դերբայական այն դարձվածները, որոնք կազմվում են անցյալ դերբայով, իսկ Պալասանյանի մոտ՝ անցյալ և անորոշ դերբայներով), բ) «Համեմատական» (սրա տակ ըմբռնելով ձևի և չափի պարագաների այն տարատեսակները, որոնք համեմատության իմաստային երանգով են օժտված), գ) «Բացատրական» (սրա տակ ըմբռնում է բացառապես այն երկրորդական նախադասությունները, որոնք հիմնականում արտահայտում են չափի ու քանակի հարաբերություն՝ երկրորդաբար դրսևորելով հետևանքի իմաստային երանգներ) «պարագայական» նախադասությունները[2]։

Պրոֆ. Մ. Աբեղյանը մի քիչ այլ կերպ է մոտենում խնդրին և նյութի տեղաբաշխման մեջ որոշակի ինքնուրույնություն է ցուցաբերում, թեև պետք է խոստովանել, որ նա ևս իբրև մեկնակետ ընդունում է Պալասանյանի տեսակետը. այսինքն՝ զուգահեռ արտահայտվող շարահյուսական իմաստային երանգները բավարար հիմք է համարում դրանք իբրև առանձին տրակի «պարագայական նախադասություններ» անվանելու։ Պրոֆ. Մ. Աբեղյանը ևս չափի և ձևի երկրորդական նախադասությունները դիտում է իբրև շարահյուսական մեկ ամբողջական կատեգորիա, և դրանց քննությունը կատարում է՝ հետևյալ ենթախմբերի բաժանելով. ա) «բաղդատական խոսքեր» ենթախումբը, որն իր հերթին ստորաբաժանվում է a) «նմանության բաղդատական խոսքերի» (սրանց մեջ մտնում են նաև «կարծեցյալ նմանության խոսքերը»), որոնցում վերլուծվում են միայն ձևի պարագա հանդիսացող նախադասությունները, b) «Հավասարության բաղդատական խոսքեր» (սրանց մեջ մտնում են նաև «հարաբերականության խոսքերը»), որոնցում ուսումնասիրվում են միայն չափի պարագա նախադասությունները, c) «Տարբերության բաղդատական խոսքեր» (սրանց մեջ մտնում են նաև «փոխանակության խոսքերը»), որտեղ նույնպես պարագա նախադասությունները, c) «Տարբերության բաղդատական խոսքեր» որտեղ հեղինակը քննության է առնում գլխավոր նախադասության գործողության ձևի և չափի պարագաները՝ նրանից (գլխավոր նախադասության գործողությունից) առաջացած հետևանքը նկարագրելու շնորհիվ, գ) «Բացարարության խոսքեր», որոնք կազմվում են «առանց որ» շաղկապով և բացասում են

[2] Տե՛ս Ստ. Մալխասյանց, Գրաբարի համաձայնություններ, Թիֆլիս, 1892, էջ 131—132։

հարակից հետևանքի կամ հանգամանքի առկայությունը[4]։

Իբրև եզրակացություն պետք է ասել, որ մեր հայ քերականագետները թեև ճանաչել են չափի և ձևի պարագաները, բայց դրանք ըմբռնել են ոչ որպես ինքնուրույն և անկախ շարահյուսական կատեգորիաներ, և նյութի բաշխման ու մշակման գործում թույլ են տվել որոշ անհետևողականություն։ Նրանք, ելնելով շարահյուսական այդ կատեգորիաների արտահայտած իմաստային բազմաթիվ երանգներից, դրանցից յուրաքանչյուրին վերագրել են շարահյուսական առանձին միավորի արժեք։ Այդ է պատճառը, որ շատ անգամ իմաստային միևնույն նրբերանգը դրսևորող չափի և ձևի պարագաները, չնայած նրանց շարահյուսական տարբեր կատեգորիաների պատկանելիությանը, խմբավորվել և քննվել են միասնաբար նույն միավորի տակ։ Այդպես են վարվել Ստ. Պալասանյանը «Համեմատական նախադասություններ» ստորաբաժնում[5], ակադ. Մալխասյանը՝ «Համեմատական» և «Բացատրական պարագայական նախադասություններ» ենթաբաժիններում[6], պրոֆ. Մ. Աբեղյանը՝ «Բաղդատական խոսքեր» և «Հետևանքի խոսքեր» ենթախմբերում[7]։ Ավելին, նման մոտեցման արդյունքը եղել է այն, որ սխալ կերպով շարահյուսական տարբեր կատեգորիաները վերագրվել են այնպիսի երկրորդական նախադասություններին, որոնք իրականում այդպիսին չեն. ընդհակառակն, նրանց արտահայտած շարահյուսական հիմնական ֆունկցիան բոլորովին այլ բնույթ ունի, քան երկրորդաբար, իբրև առանձին նրբերանգ, դրսևորվող նրանց իմաստային հարաբերությունները։ Ասվածից հետևում է, որ հիշել հեղինակների միակողմանի մոտեցումը տվյալ դեպքում բխում է այն ելակետից, ըստ որի նրանք չեն տարբերել շարահյուսական հիմնական ֆունկցիան՝ երկրորդական. օժանդակ շարահյուսական իմաստից և նախապատվություն տալով վերջինին, մոռացության են տվել առաջինը՝ հիմնականն ու որոշիչը։

* * *

Դասական հայերենում չափի պարագա երկրորդական նախադասությունները կազմվում են քերականական հետևյալ միջոցներով.

ա) Չափի պարագա երկրորդական նախադասությունները գլխավոր նախադասությանը կապվում են «զի», «թէ», «որ», «մինչ», «մինչև», «մինչ զի», «մինչ անգամ», «որպէս զի», «մինչչև» շաղկապներով, ինչպես նաև «որքան», «ցորքան», «որչափ» հարաբերական բառերով և «որչափ թէ» բառակապակցությամբ։

բ) Գլխավոր նախադասության մեջ իբրև հարաբերյալներ հանդես են գալիս «այնչափ», «քանի», «այնքան», «այնու», «այսպիսի», «դոյնչափ», «հոյնչափ» բառերը։

Չափի պարագա երկրորդական նախադասությունները կարող են վերաբերվել ա) գլխավոր նախադասության ամբողջ բայ-ստորոգյալին և ցույց տալ նրա գործողության ծավալն ու տարողությունը՝ նկարագրելով միաժամանակ գլխավոր մասի գործողությունից առաջացած իբրև հետևանք տեղի ունեցող գործողություն. բ) նրանք կարող են վերաբերվել գլխավոր նախադասության միայն

[4] Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսությունը, Վաղարշապատ, 1912, էջ 310—315։
[5] Տես Ստ. Պալասանյան, Նշված աշխատությունը, էջ 92։
[6] Տես Ստ. Մալխասյանց, Նշված աշխատությունը, էջ 131—132։
[7] Տե՛ս պրոֆ. Մ. Աբեղյան, Նշված աշխատությունը, էջ 310—314, 314—315։

ստորոգելիական վերադիրին, երբ տվյալ հատկանիշը հանգույցի միջոցով վերագրվում է ենթակային։ Վերջին դեպքում չափի պարագա երկրորդական նախադասությամբ արտահայտվում է տվյալ հատկանիշի ինչ աստիճանով կամ քանակով հանդես գալը։ Այդ տիպի երկրորդական նախադասությունները նույնպես դրսևորում են հետևանքի իմաստային երանգ։

Նման կառուցվածք ունեցող երկրորդական նախադասությունները մեծ մասամբ գլխավոր նախադասություններին կապվում են «զի» շաղկապով և ունենում են «այնչափ», «քանի» հարաբերյալները։ Վերջիններս թեև գլխավոր նախադասության մեջ կատարում են չափի պարագայի պաշտոն, սակայն նրանք այնտեղ ունեն ձևական բնույթ, որովհետև նրանց կոնկրետ բովանդակությունը բացահայտվում է միայն երկրորդական նախադասությամբ։ Առավել կարևոր է այն հանգամանքը, որ հենց այդ հարաբերյալների առկայությունը գլխավոր նախադասության մեջ հնարավոր է դարձնում «զի» շաղկապով միացող երկրորդական նախադասություններին չափի պարագայի շարահյուսական իմաստ հաղորդել. այլապես, առանց այդ հարաբերյալների, երկրորդական նախադասությունը ձեռք կբերի պատճառի պարագայի շարահյուսական ֆունկցիա։

«Եվ այնչափ կորոյս (շինուածս բագնացն), զի յետ այնորիկ ոչ ինչ ոք յայնմ տեղւոջ նշմարսեն կարէր գտանել, ոչ քարի և ոչ փայտի, ոչ ոսկւոյ և ոչ արծաթոյ, և ոչ բնաւ երևէր, թէ լեալ ինչ իցէ անդ» (Ագաթանգեղոս, ՊՀ, 424)։

Վկայված օրինակում երկրորդական նախադասությունը ամբողջությամբ վերաբերում է գլխավոր նախադասության բայ-ստորոգյալին, ուստի և վերջինս դրված է պարզ կազմությամբ (կորոյս)։

«Եւ այնչափ չար էին արքն երկոքին, զի անգամ իւրեանց ումեք ոչ ողորմէին, այլ անխնայութեամբ դատէին զօտարս և զիւրեանց ընդանիս» (Բիւզանդ, ՊՀ, 271)։

Տվյալ օրինակում երկրորդական նախադասությամբ նկարագրվում ու բացահայտվում է գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի հատկանիշի չափը, աստիճանը՝ հետևանքի իմաստային երանգով օժտված։ Այս կառուցվածքի բարդ նախադասությունների կարևոր առանձնահատկությունն այն է, որ գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը իր կազմությամբ միշտ բաղադրյալ է լինում, այսինքն՝ բաղկացած է լինում հատկանիշ արտահայտող ստորոգելիական վերադիրից և ստորոգումն իրագործող հանգույցից։

Երևույթը նույնն է նաև հետևյալ օրինակում. երկրորդական նախադասությանը չափի պարագայի իմաստ է հաղորդվում շնորհիվ «քանի» հարաբերյալի։ Եթե չիներ այդ հարաբերյալը, երկրորդական նախադասությունը անմիջապես կստանար պատճառի իմաստ.

«Քանի լիրբ է խորամանկ խաբէութիւն նորա, զի երկիցս և երիցս զփորձ առեալ կշտամբեցաւ և ոչ ամաչէ» (Եղիշե, ՎՎՊ, 86)։

Ի դեպ՝ «քանի» հարաբերյալով կազմված և «զի» շաղկապով միացած երկրորդական նախադասությունները չափի շարահյուսական իմաստով շատ հաղվադեպ գործածություն ունեն դրաբարում։

Իմաստային նույն հարաբերությամբ գլխավոր նախադասության մեջ բայ-ստորոգյալի շրջումն ձևին հանդիպում ենք, երբ բարդ նախադասությամբ արտահայտված ամբողջ հաղորդումը ավելի արտահայտիչ, աշխույժ բնույթ է կրում.

«Եւ առ բանն աստուծոյ (Դանիէլ) այնչափ էր ինչ զի զինչ հայցէրն յաստուծոյ առնոյր, և զոր ինչ ասէր՝ այն լինէր» (Բիւզ., ՊՀ, 59)։

«Այնչափ էր երկիւղած (Յուսիկ) ի տեառնէ, զի ոչ գսէր և ոչ զահ թագաւորին առ ոչինչ համարէր» (Բիւզ., ՊՀ, 49)։

Բայց ունենք նաև կառուցվածքային միևնույն տիպին պատկանող այնպիսի բարդ նախադասություններ, որոնցում երկրորդական նախադասությունները պարզապես գլխավոր նախադասության բայ-ստորոգյալի հատկանիշի չափն ու աստիճանն են նշում, առանց իմաստային որևէ այլ երանգի.

«Այսչափ ամք են, զի տեսի ես զքեզ, և յամենայն զօրութենէ քումմէ ծառայեցեր դու ինձ միամտութեամբ. և ես գոհ էի զվաստակոց քոց և ոչէի ի մտի կեցուցանել զքեզ. ընդէ՞ր ոչ առնես զկամս իմ» (Ագաթանգեղոս, 30)։

Երկրորդական նախադասությունները կարող են դրսևորել նաև նպատակի իմաստային երանգ։ Այդ դեպքում երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալները դրվում են 2-րդ ապառնիի միայն ըղձական եղանակի իմաստով. իսկ դա, իր հերթին, նշանակում է, որ ըղձական եղանակի իմաստը ինքնին նշում, ակնարկում է մի այնպիսի գործողություն, որի կատարումը ցանկալի է, որի մեջ սուբյեկտիվ մոմենտը շեշտված է։ Հետևաբար նպատակն էլ ուրիշ բան չէ, եթե ոչ սուբյեկտիվ մղում, ձգտում տվյալ հեռանկարին կամ մտադրության հասնելու համար։ Ասվածից կարելի է եզրակացնել, որ նպատակի իմաստը արդեն առկա է 2-րդ ապառնիով արտահայտված ըղձական եղանակի նշանակության մեջ.

«Բայց սակայն արձակել տալ ոչ կարացին (աւագք և խորհրդականք թագաւորի), այլ արկին յայն չափիս, զի աքսորեսցի միայն» (Բիւզ., ՊՀ, 137)։

Վկայված օրինակում գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է այն նպատակով («արկին յայն չափ»), որպեսզի տեղի ունենա երկրորդական նախադասության գործողությունը, որի իրագործումը ցանկալի է, նպատակահարմար, ուստի և գլխավոր նախադասության ենթակայի շահագրգռվածության մոմենտը երկրորդական նախադասության գործողության իրականացմամբ՝ միանգամայն ակնբախ է, («զի աքսորեսցի միայն»)։ Մյուս կողմից, երկրորդական նախադասության բառակազմի մեջ օգտագործված միայն մասնիկը դրված է սահմանափակման իմաստով, այսինքն՝ գլխավոր նախադասության գործողությունը կատարվել է այն նպատակառումով, որպեսզի տեղի ունենա երկրորդական նախադասության միայն նշված գործողությունը և ոչ ուրիշ կարգի գործողություն։

Իմաստային նույն հարաբերությունը (նպատակ) կարող է դրսևորվել նաև «թէ» շաղկապով միացող երկրորդական նախադասություններում.

«Այլ լուսաւորացն այնչափ ինչ է, որպէս աստուածատուր գիրք ասեն՝ թէ եղիցին ի նշանս և ի ժամանակս և յաւուրս և ի տարիս» (Եզնիկ, ԵԱ, 152)։

Շարահյուսական համանման հարաբերություններ, բայց գործածության առավել նվազ հաճախականությամբ, կարող են դրսևորվել «որ» շաղկապով.

«Այդ ո՞վ իցէ ասեն այնչափ մոլեգին որ ոչ սիրիցէ զտէրն իւր»։ (Ոսկեբերան, Մեկնութիւն Սուրբ Աւետարանի. էջ 138)։

«Եւ (Փիսակն) այնչափ զայրացոյց գրգռեաց յուզեաց դրդեաց սրտմտեցոյց բարկացոյց զթագաւորն Պարսից ի վերայ արքային Հայոց, որ ապա առ հրամանն ի նմանէ...» (Բիւզ., ՊՀ, 78—79)։

Ինչպես կարելի է նկատել վերոբերյալ օրինակներից, «զի», «որ» շաղկապներով միացող երկրորդական նախադասությունների մեծ մասը հիմնականում նկարագրում և պարզաբանում են գլխավոր նախադասության բայստորոգյալի հանգամանքները՝ չափի տեսակետից, սակայն ընդհանրապես երանգավորված՝ հետևանքի և նպատակի իմաստային առումներով։ Նրանց բնորոշ առանձնահատկությունն այն է, որ նրանք հանդես են գալիս, շարադասության տեսակետից, միշտ գլխավոր նախադասությանը հետադաս դիրքում։

Բայց գրաբարում կան նաև պարագա երկրորդական նախադասությունների այնպիսի տարատեսակներ, որոնք արտահայտելով հանդերձ իրենց շարահյուսական հիմնական ֆունկցիան (չափի պարագա լինելը), օժտված են նաև համեմատության իմաստային երանգով, ըստ որում այդ համեմատությունն էլ յուրաքանչյուր կառուցվածքային առանձին տիպերի դեպքում բազմազան է լինում։

1. Հավասարություն նշող չափի պարագա նախադասություններ.— Բարդ նախադասությունների կառուցվածքային այս տիպը իր գլխավոր և երկրորդական մասերով գործողության նույն ծավալն ու տարողությունն ունեն։ Գլխավոր նախադասությամբ նկարագրվում է այնպիսի գործողություն, որի տևողությունը ուղիղ համեմատական է երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողությանը։ Այդ նշանակում է, որ գլխավոր նախադասության գործողությունը որոշվում և սահմանափակվում է՝ նկարագրելով երկրորդական նախադասության գործողությունը չափի նույն հարաբերությամբ։ Այդ իսկ պատճառով երկրորդական նախադասությունները գլխավորին կապվում են քերականական այնպիսի միջոցներով, որոնք ինքնին նշում են սահմանափակում («մինչև», «մինչ», «մինչ-զի» շաղկապներով)։ Իսկ գլխավոր նախադասության մեջ առկա են լինում «այնչափ», «այնքան» հարաբերյալները, որոնք առավել բացահայտ կերպով ընդգծում են գլխավոր մասի գործողության ծավալի հավասար, համապատասխան լինելը երկրորդական մասի գործողության ծավալին։ Շարադասության տեսակետից նման կառուցվածքի բարդ նախադասությունների երկրորդական մասը միշտ հետադաս է լինում։

ա) Այս ենթատեսակին են պատկանում ժամանակի պարագա հանդիսացող նախադասությունների մի մասը, որոնց գլխավոր նախադասությունները իրենց գործողությամբ միշտ նախորդում են երկրորդական նախադասություններին և որոնց ժամանակային տևողությունը սահմանափակվում է վերջիններով։ Այդ կառուցվածքի երկրորդական նախադասությունները իմաստային անցում են կատարել դեպի չափի պարագա նախադասությունները։

«Եւ ետ հրաման քերել զկողս նորա երկաթի քերչօք, մինչև ոսոգան վայրքն ամենայն յարենէ նորա» (Ագաթ. 65)։

«Զայս իբրև արարին, փակեցին ի ներքս բազմութիւն ձկանց յոյժ, մինչև պարպատէին ուռկանք նոցա» (Ղուկասու, 64)։

«Յայնժամ սկսան սատակել և կոտորել, մինչև ոչ թողին յերիտասարդաց մինչև յայն, որ բնաւ զաջ և զձախ ոչ գիտէր» (Ագաթ. 23)։

Թեև վկայված օրինակներում չափի հասկացողությունը տիրապետող, գերիշխող է, բայց դեռևս զգալի է նաև ժամանակի դաղափարը։ Որպեսզի բացարձակ կերպով չափի դաղափար արտահայտվի տվյալ երկրորդական նախա-

դասությամբ, գլխավոր նախադասության կազմում հանդես է գալիս «այնչափ» հարաբերյալը։

«Այնչափ փոփոխումն գտեալ երանելւոյն Պաւղոսի, մինչև անուանն եւս փոփոխումն լինէր» (Եւթաղ, 83—84)։

Սույն օրինակում ուշագրավ է հետևյալ հանգամանքը. գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը արտահայտված լինելով անցյալ դերբայով, նրա ենթական իր որոշիչի հետ միասին դրվել է սեռականով («երանելւոյն Պաւղոսի»), մի երևույթ, որը շատ բնորոշ է գրաբարում դերբայական կառուցվածք ունեցող նախադասությունների համար։ Սակայն այդ կառուցվածքի նախադասությունները հայերենի հետագա զարգացման ընթացքում զրկվեցին իրենց կենսունակությունից և դադարեցին գործելուց միջին հայերենից այս կողմ։

Ընդամենը մի անգամ Եզնիկի մոտ նույն տիպի բարդ նախադասություններում «այնչափ» հարաբերյալի փոխարեն գործածվել է «այնքան» հարաբերյալը։

«Որոց այնման կամակոր յամառութիւն եղեւ, մինչև յայնչափ ի բազում ի նախքաց փիլիսոփայիցն աստուածոց և ոչ մի աստուած ըմբռնել» (Եզն., ԵԱ, 160)։

Այս բարդ նախադասության երկրորդական մասի բայ-ստորոգյալը անտրոշ դերբայով է դրված, որի եղանակային, ժամանակային և դիմային հարաբերությունները բացահայտվում են միայն գլխավոր մասի բայ-ստորոգյալի դիմավոր ձևից։ Դերբայական նախադասությունների այս տիպերը նույնպես շատ բնորոշ են դասական շրջանի հայերենին։

Ինչպես տեսնում ենք, «այնչափ», «այնքան» հարաբերյալների առկայությունը գլխավոր նախադասության մեջ քերականական օժանդակ միջոց են հանդիսանում չափի պարագայի դրսևորման շեշտված, ընդգծված իմաստի համար։

Շարահյուսական հարանման հարաբերություններ դրսևորվում են նաև «մինչ», «մինչ զի» շաղկապներով միացող չափի պարագա երկրորդական նախադասությունները, որոնք, սակայն, շատ սակավադեպ գործածություն ունեն.

«...թէ գազանք ահագինք են, և վիշապք և օձք և այլ ճճիք վնասակարք. և մարդն այնչափ հպարտացեալ է՝ մինչ ըստ Աստուծոյ երկիւղին սահմանս արտաքոյ ելեալ անսաստէ, եթէ այնպիսի զարհուրեցուցիչք չէին՝ որչա՞փ ևս առաւել չկայր երբէք յակաստանի» (Եզն., ԵԱ, 44—45)։

«... և շրջշրջէին զնա անդէն, մինչև առ հասարակ ծակոտեցան մանրիկ մարմինք նորա, մինչ զի ոչ մնաց ի նմա տեղի ողջ» (Ագաթ. 66)։

Նպատակի իմաստային երանգով է օժտված նաև «մինչ զի» շաղկապով միացած երկրորդական նախադասությունը, երբ գլխավոր նախադասության մեջ «մինչ զի» բարդ շաղկապին համապատասխանում է «այնքան» հարաբերյալը.

«...այնման ուշ դնելոյ բանիս հոգ տանիցիք, մինչ զի կարող լինիջիք և այլոյ պատմել և համար տալ զսոսա ճշմարտութեամբ» (ՅՈ ՄՍԱ, էջ 241)։

Ունենք նաև «մինչ անգամ» բարդ շաղկապով միացած չափի պարագա հանդիսացող երկրորդական նախադասությունների առավել սակավադեպ հաճախականության նմուշներ, որոնք գլխավոր մասում չունեն համապատասխան հարաբերյալներ.

«Մանաւանդ աւելի զերկու տոհմսն զաւագս տայր իւրով չարախոսութեամբն հանել ընդ սուր. և անունդ առնել միահաղոյն զտոհմսն Ռշտունեաց և զտոհմն Արծրունեաց. բառնային ի միջոյ առանց ամենայն վնասու և յանցման, մինչ անգամ և զէգսն կոտորեցին ազգացն» (Բիւզ. 72—73)։

Գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողության հավասար հարաբերություն կարող է դրսևորվել նաև այնպիսի բարդ նախադասությունների դեպքում, որոնց կառուցվածքը հետևյալ առանձնահատկությունն ունի. երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է «ց» նախդիրով միացած «որքան» հարաբերական բառով («ցորքան»), գլխավորին հետադաս դիրքում.

«Կին կապեալ է, ցորման ժամանակս կենդանի է այր նորա. ապա եթէ ննջիցէ այր նորա, ազատ է, ում կամիցի ամուսնանալ, բայց միայն Տերամբ» (Թուղթ առ Կորնթացիս, 177)։

Փավստոս Բուզանդի մոտ, շարահյուսական միևնույն իմաստով, ընդամենը մի անգամ գործածված ենք գտնում «որպէս զի» շաղկապով միացած չափի պարագա երկրորդական նախադասությունը.

«Եւ ամենայն երկիր սկսան ի նա նայել, որպէս թէ անդուստ երկնից ի վերուստ իջեալ ֆցէ, այնչափ՝, որպէս զի թէ կամիցի ոք պատմել, ոչ կարասցի» (Բիւզ. 148)։

Նման կառուցվածք ունեցող երկրորդական նախադասությունները առհասարակ դասական գրականության մեջ շատ քիչ են հանդիպում և հայերենի հետագա զարգացման ընթացքում ամենևին դադարում են գործելուց։ Այդ հանգամանքը պետք է վերագրել այն բանին, որ «որպէս զի» շաղկապը դեռևս գրաբարի ծաղկման շրջանում խոսող հանրության կողմից գիտակցվում և ըմբռնվում էր գերազանցապես իբրև նպատակային հարաբերություն ցույց տվող շաղկապ։ Համեմատիր նաև հետևյալ բարդ նախադասությունը Ոսկեբերանի թարգմանված աշխատության մեջ.

«Միթէ և կոյսն, ասեն, ոսկո՞վ զարդարեսցի, կամ հիւսածոյս և ընդելուզեալս մարգարտո՞վ զգեցուցու։ Այնչափ ինչ են լոկ պաճուճանքն որպէս զի ոսկեհուռքն ոչ ինչ են այնմ համեմատ» (Ոսկեբերան, 1, էջ 68)։

Հետաքրքրական կառուցվածք ունեն այնպիսի բարդ նախադասություններ, որոնցում երկրորդական մասը գլխավորին միանում է «մինչև» շաղկապով։ Այս դեպքում «մինչև» շաղկապը երկրորդական նախադասությանը հաղորդում է ժխտական իմաստ, որի գործողության բացասման պայմաններում և միայն նրա տևողության չափով տեղի է ունենում գլխավորի գործողությունը։ Այլ կերպ ասած՝ գլխավոր նախադասությամբ նկարագրվում է այնպիսի գործողություն, որը տևում է այնքան ժամանակ, որքան տակավին տեղի չի ունեցել երկրորդական մասի գործողությունը։ Այս տիպի նախադասությունները գալիս են ժամանակի պարագա հանդիսացող երկրորդական նախադասություններից, որոնց մեջ արդեն չափի և աստիճանի գաղափարը տիրապետող է դարձել։ Բայ-ստորոգյալների կազմության տեսակետից պետք է նկատել հետևյալ հանգամանքը. գլխավոր մասի ստորոգյալը կարող է դրվել դիմավոր բայի պարզ ձևով, իսկ երկրորդական մասի ստորոգյալը՝ անպայման բաղադրյալ ձևով, այսինքն՝ կազմված անցյալ դերբայից և օժանդակ բայից.

«Բեր ինձ որս և արա ինձ խորտիկս, զի կերայց և օրհնեցից զքեզ առաջի

Տեառնն մինչչեւ մեռեալ իցեմ» (Ծնունդք, 25, «մինչչեւ» = քանի դեռ, այնքան ժամանակ, որքան չ...)։

«Յանկանալով ցանկացայ զայս պասեք ուտել ընդ ձեզ, մինչչեւ չարչարեալ իցեմ» (Ղուկ. 88)։

Դասական հայերենն ունի նաև «որքան» հարաբերականով միացած երկրորդական նախադասություններ, որոնք թեև նվազ հաճախականությամբ են հանդես դալիս, սակայն լինելով նտրագոյացումներ, օժտված են եղել մեծ կենսունակությամբ. այդ է պատճառը, որ հայերենի զարգացման հետագա փուլերում գնալով ծավալվել ու տարածվել են և հանդիսացել են չափի պարագա նշող նախադասությունների բնորոշ և հիմնական ձևերից մեկը։

«Տուր ինձ զտեղիդ քո զայգ զկալդ. և շինեցից այդր սեղան Տեառն, արծաթոյ որման արժիցէ՝ տացես ինձ զդա» (Մնացորդաց, 356)։

Սակայն հենց գրաբարի ծաղկման շրջանում առավել լայն տարածում և կենսունակություն են տունեցել «որչափ» հարաբերականով միացած երկրորդական նախադասությունները և ժամանակակից հայերենում էլ, շարահյուսական նույն ֆունկցիայով, ունեն գործածության մեծ հաճախականություն։ Պետք է ընդգծել, որ այդ հանգամանքին նպաստել է «որչափ» հարաբերականի բառային իմաստը, որն ինքնին ցույց է տալիս քանակային այնպիսի հարաբերություն, որով բացահայտվում և կոնկրետանում է գլխավոր նախադասության բովանդակությունը՝ չափի կողմից։ Դրանից հետևում է, որ չափի և աստիճանի հասկացությունը գլխավոր նախադասության մեջ ըմբռնվում է երկրորդական նախադասության շնորհիվ, նրա չափով և նրան հավասար համեմատական հարաբերությամբ։

«...ծուխ և շտգի երկրի՝ և բոց հրոյ, քանզի թեթևք են, ի վեր կողմն գնան, և քար և զերկաթ և զփայտ և զայլ ևս ինչ նոյնպիսիս, որչափ և ի վեր ոք ձգիցէ՝ ի խոնարհ միտեալ իջանեն» (Եզն, ԵՍ, 133)։

«...որչափ և տեսանիցես ուրեք կոիւ կամ նախանձ, վասն մարմնաւոր ինչ իրաց լինին, կամ յագահութենէ կամ ի նախանձուէ կամ ի սնապարծութենէ սկիզբն կռուոյ» (Ոսկ. հատ. 1, 505)։

Ուշագրավ է վկայված օրինակներից վերջինը, որի երկրորդական նախադասության բառաշարքում «որչափ» հարաբերականին միացել է «և» շաղկապը, որով չափի հասկացությունը առավել անորոշ և ընդհանուր բնույթ է կրել։

Շարահյուսական համանման ֆունկցիան կարող են կատարել նաև «որչափ թէ» բառակապակցությամբ միացած երկրորդական նախադասությունները, որոնք, սակայն, բնորոշ և տարածված չեն.

«...զոր օրինակ լոյսդ. որչափ թէ բիւրս և հազարս լուսաւորիցէ ոչ ինչ պակաս լինի յիւրմէ լուսաւորութենէ անտի» (ՅՈ ՄՍԱ, 77)։

«Որչափ հարաբերականին գլխավոր նախադասության մեջ կարող է համապատասխանել նաև «այնչափ» հարաբերյալը. այդ դեպքում բարդ նախադասության մասերի միջև սերտությունը առավել ակնբախ կլինի և չափի հասկացությունը կդրսևորվի հավասարության հարաբերական համեմատությամբ. այսինքն՝ գլխավոր նախադասությամբ նկարագրվում է մի գործողություն, որի քանակը որոշվում է երկրորդական նախադասության գործողությամբ, առանց չափի կոնկրետության, ընդհանրապես։

«Եւ փորձեալ այնչափ իշխէ սատանայ, որչափ հրաման առնու» (Եղն., ԵԼՒ, 125)։

«Եւ արդ՝ ո՞ր բանք ի դէպ իցեն ասելոյ, թէ ևս ի խոնարհ և յետ Մոսիսի այնչափ ժամանակս ումեք հասանէր կեալ, որչափ վերագոյն ճառեցաք» (Քրոնիկոն, մասն 1, էջ 77)։

«Որչափ» հարաբերականին գլխավոր նախադասության մեջ կարող է համապատասխանել նաև «այն» դերանունը՝ դրված գլխավոր նախադասության բառաշարքի սկզբում. նրա նյութական բովանդակությունը բացահայտում և շոշափելի է դարձնում երկրորդական նախադասությամբ նկարագրված չափի պարագան.

«Բայց ուր լինէր հանդէս, ի նշանաւոր տեղիս զնդի գնդի, դրօշու դրօշու, վաշտուց վաշտուց, յերևելի երևելի տեղեաց՝ մէն մի բռնաքար այր հրամայէին, զի բերցեն ընկեսցեն՝ շեղջ կուտել. զի որչափ լիցի, այնու երևեսցի նշանակ բազմութեանն, առ իմանալ առ վաղիւ անցելոց, իրացն ահատրութեան նշանակ» (Բիւզ. 25)։

«Որչափ» հարաբերականին գլխավոր նախադասության մեջ կարող է համապատասխանել նաև «այսպիսի» հարաբերյալ դերանունը. այդ ժամանակ ուշագրավ է դիտել հետևյալ հանգամանքը. երկրորդական նախադասությունը չափի պարագա նկարագրելով հանդերձ, որոշում, բնութագրում է գլխավոր նախադասության գոյականով արտահայտված որևէ անդամի. այդ նշանակում է, որ երկրորդական նախադասությունը որոշչի շարահյուսական ֆունկցիա է կատարում՝ բնութագրելով գլխավոր նախադասության տվյալ անդամը՝ չափի ու քանակի կողմից.

«Բայց ի ձէնջ տրք ի հասակ եկեալդ էք, ոչ այսպիսի պահանջեմ աշխատութիւն որչափ դուք տրդուց ձերոց» (ՅՈ, ՄՍԱ, 240)։

Շարադասության տեսակետից «այնչափ...որչափ» քերականական միջոցներով կազմված բարդ նախադասության երկրորդական մասերը կարող են լինել նախադաս և հետադաս դիրքերում. իսկ միջադաս՝ ամենևին չի պատահում։

Երբ հաղորդման կողմից հեղինակի համար առավել կարևոր նշանակություն ունի գլխավոր նախադասության բովանդակությունը. երկրորդական նախադասությունը դրվում է գլխավորին հետադաս.

«...այնչափ հեռի եմք ի փառաւորութենէն Յովհաննու որչափ երկիրս յերկնից». և նա ոչ արժանաւորեաց զանձն իւր զխրացս կօշկացն լուծանել» (ՅՈ, ՄՍԱ, 156)։

Իսկ երբ հեղինակը ուզում է ընթերցողի ուշադրությունը բևեռել երկրորդական նախադասության բովանդակության վրա, որպես առավել կարևոր նշանակություն ունեցող հաղորդում, այդ դեպքում երկրորդական նախադասությունը լինում է նախադաս դիրքում.

«Տես որչափ ինչ անջրպետութիւն կայ ի միջի, այնչափ վայրս հատանել անցանել հասանէ, յորպիսի բարձրութիւնս վերանալ ելանել թեօք հոգւոյն»։ (Ոսկ. հ. 1, էջ 482)։

բ) Եթե հարկ է շեշտել, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվում է երկրորդական նախադասության գործողությանը բացարձակորեն հավասար չափով, ապա «որչափ» հարաբերականին կարող է համապատասխանել գլխավոր մասում «նոյնչափ», «դոյնչափ» հարաբերյալները, որոնք

միշտ դրված են լինում գլխավոր նախադասության սկզբում։ Այստեղ գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողության չափի հարաբերականությունը ուղղակի հավասար համեմատական է։ Շարահյուսական այդ իմաստի դրսևորման համար նպաստում է հենց «նոյնչափ», «դոյնչափ» հարաբերյալների բառային իմաստը, որոնք արդեն որոշիչ, սահմանափակող նշանակություն ունեն գլխավոր մասի գործողության չափի ըմբռնման համար։ «Նոյնչափ» («դոյնչափ») դերանվան շնորհիվ բացահայտվում է գլխավոր մասի գործողության ճշգրիտ համապատասխանությունը երկրորդական մասի գործողության չափին։ Թեև «նոյնչափ», «դոյնչափ», «այնչափ» և այլն հարաբերյալները գլխավոր նախադասության մեջ չափի պարագայի պաշտոն են կատարում, սակայն նրանց բուն բովանդակությունը, նյութական իմաստը արտահայտվում է երկրորդական նախադասությամբ, հենց այդ նպատակին էլ են ծառայում երկրորդական նախադասությունները։ Ասվածից կարելի է հետևցնել, որ հարաբերյալների առկայությունը գլխավոր նախադասության մեջ սոսկ ձևական ֆունկցիայի նշանակություն ունի։

«Եւ որչափ սիրէր արքայն Արշակ զկինն, նոյնչափ ատեաց կինն զարքայն Արշակ, ասելով՝ թէ թաւ է մարմնով, և թուխ է գունով» (Բիւզ. 190)։

«...որչափ նա զարմանալի լինէր, նոյնչափ և դու չարակամ» (Ոսկ. հ. 1, 52)։

Եթե «որչափ» հարաբերական բառին գլխավոր նախադասության մեջ համապատասխանում է «այնչափ» հարաբերյալը, ապա այդ դեպքում բարդ նախադասության երկու մասերի գործողության ըմբռնումը լինում է միայն հավասարության համեմատական հարաբերականություն. իսկ եթե «որչափ» հարաբերականին գլխավոր մասում համապատասխանում են «նոյնչափ», «դոյնչափ» հարաբերյալները, երկու մասերի գործողությունը ըմբռնվում է իբրև ճշգրտորեն հավասար չափով տեղի ունեցող գործողություններ. հմմտ.

«Որպէս և զջուր որչափ ի խոնարհ ոք տանիցի այնչափ ի վեր գայ, և որչափ ի բացեայ ոք ձգիցէ՝ նոյնչափ առաւել դիպեցուցանէ» «Ոսկ. հ. 1, 789)։

«Եւ երկինք, ասեն, որչափ ի վեր են՝ դոյնչափ ի խոնարհ են. և դոյնչափ յամենայն կողմանց շուրջ զերկրաւ. և զերկիրս շուրջ ջուր պատէ, և զջուրն և զերկիր՝ օդ. և զօդն և զջուր և զերկիր՝ հուր» (Եզն. 140)։

դ) Երբ անհրաժեշտ է ընդգծել, որ գլխավոր նախադասության գործողությունը կատարվի առնվազն երկրորդական նախադասությամբ նկարագրված գործողության չափով, որտեղ դարձյալ բարդ նախադասության մասերի միջև գործողությունները կատարվում են հավասար հարաբերությամբ, գլխավոր մասում «այնչափ» հարաբերյալից առաջ դրվում է «գոնէ» եղանակավորող բառը, որն իր բառային իմաստով սահմանափակիչ դեր է կատարում.

«Որչափ ինչ նոքա վասն մեր երկիւղի առնեն, գոնէ այնչափ և մեք վասն աստուծոյ երկիւղին առնիցեմք» (Ոսկ. հատ. 1, 149)։

2. Անհավասարություն նշող չափի պարագա նախադասություններ.— Կան բարդ նախադասությունների այնպիսի կառուցվածքներ, որոնցում գլխավոր և երկրորդական մասերի գործողությունները դրսևորում են չափի անհավասարություն։ Տվյալ դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների գործողության համեմատական հարաբերությունը լինում է անհամապատասխան, անհամաչափ. այսինքն՝ երկրորդական նախադասությամբ նկարա-

գրվում է մի գործողություն, որի նկատմամբ գլխավոր նախադասության գործողությունը կարող է լինել առավել կամ նվազ չափով։

ա) Չափի առավելական հարաբերություն արտահայտելու համար դասական հայերենը երկրորդական նախադասության «որչափ» հարաբերականին գլխավոր մասում համապատասխանում է «առաւել», «ևս քան զևս» հարաբերյալները, որոնք իրենց բառային իմաստով էլ ակնարկում, ընդգծում են գլխավոր նախադասության գործողության ավելի մեծ լինելը երկրորդականի հանդեպ։ Այս տիպի բարդ ստորադասական նախադասություններում, շարադասության տեսակետից, երկրորդական նախադասությունը միշտ նախադաս է լինում, գլխավորը՝ հետադաս. իսկ միջադաս երբեք չի հանդիպում։

«Նախանձեցաւ Կայէն ընդ Հաբէլ. և ոչ բժշկեցաւ. և որչափ աստուած զվէր նորա կամէր բժշկել՝ նա առաւել բորբոքիւր բարկութեամբ» (ՅՈ, ՄՍԱ, 373)։

Բարդ նախադասությունների այսպիսի կառուցվածքը չափազանց կենսունակ է եղել հայերենի զարգացման բոլոր փուլերում՝ հատկապես XIX դարի հայ գրականության մեջ, ինչպես և ժամանակակից հայերենում, միայն մի վերապահությամբ. «առաւել» մասնիկը գրաբարյան ուժեղ դրոշմ կրելով, դրա փոխարեն օգտագործվում է «ավելի» մասնիկը՝ արտահայտելով շարահյուսական միևնույն ֆունկցիան։

Գլխավոր նախադասության գործողության առավելությունը (գերազանցությունը) երկրորդական նախադասության գործողության հանդեպ ընդգծելու համար, իբրև սաստկացնող մասնիկ, կարող է օգտագործվել նաև «ևս առաւել» բառակապակցությունը.

«Իսկ հոգևորական վարդապետութիւն, որչափ և զօրանայ՝ զհոգին որ ընդունի զնա՝ ևս առաւել հզօր գործէ» (ՅՈ, ՄՍԱ, 181)։

Եթե չափի անհավասարություն արտահայտող բարդ նախադասությունների գլխավոր մասում հանդես եկող «առաւել», «ևս առաւել» մասնիկները նկարագրում են պարզապես գլխավոր նախադասության գործողության գերազանցությունը երկրորդականի նկատմամբ, ապա այնպիսի բարդ նախադասություններում, որոնց գլխավոր մասի բառային կազմի մեջ «ևս քան զևս» բառակապակցությունն է օգտագործված, արտահայտվում է հարաբերական գերազանցություն։ Իմաստային այդ նրբությունը կարելի է ընկալել միայն ուշադիր համեմատությամբ.

«Որչափ բազում ինչս կուտիցէ ոք, ևս քան զևս զանձին քունն հատանէ» (Ոսկ. հ. 1, 220, ևս քան զևս = «ավելի ու ավելի»)։

Շարահյուսական նույն հարաբերությունը գրաբարում դրսևորվում է նաև այլ կերպ. երկրորդական նախադասությունը կապելով գլխավորին «որչափ» հարաբերական բառով, գլխավոր նախադասության սկզբում հանդես է գալիս բաղդատական ածականի ձևով կազմված մակբայը, որն իր բառային իմաստով ակնարկում է մի բանի «առավել» լինելը.

«Սրբեցեր զմարմինս մեր քարշելով, և զլսելիս մեր կտրելով. սրբեա և զոնգունս մեր հատանելով, քանզի որչափ տգեղս առնես զմեզ երկրաւորաւս, գեղեցկագոյնս առնես զմեզ երկնաւորաւն» (Եղիշ. 186)։

բ) Գլխավոր նախադասության գործողությունը չափի տեսակետից կարող է արտահայտվել նվազական հարաբերությամբ՝ երկրորդական նախադասու-

թյան գործողության նկատմամբ։ Այդ դեպքում թեև բարդ նախադասությունը կազմվում է «որչափ...այնչափ» քերականական միջոցներով, սակայն գլխավոր նախադասության բայ-ստորոգյալը անպայման պետք է արտահայտված լինի ժխտական ձևով, ունենա իր հետ ժխտական մասնիկը.

«Ոչ այնչափ վնաս գործէ ծովն յորժամ ելանիցէ զսահմանսն որչափ հեղեղատիցէ որովայնն մեր տգիս և զմարմինս» (Ոսկ. հատ. 1, 493)։

* *

Մենք ընդհանուր գծերով նկարագրեցինք չափի պարագա երկրորդական նախադասությունների տարբեր տիպերի կառուցվածքը դասական հայերենում, ցույց տալով նրանց առանձնահատկություններն ու արտահայտած շարահյուսական բազմազան իմաստային երանգներն ու կատարած պաշտոնը։ Այդ իսկ տեսակետից չափազանց կարևոր է ժամանակակից հայերենի երկրորդական նախադասությունների շարահյուսական համակարգում չափի պարագա նախադասությունների էվոլյուցիայի համար դասական հայերենի այդ կարգի նախադասությունների քննությունը։ Իբրև եզրակացություն պետք է ասել, որ գրաբարը լինելով զարգացման լայն ուղի անցած հնդարյան լեզուներից մեկը, օժտված է ստորադասական կապակցությամբ հանդես եկող երկրորդական նախադասությունների, այդ թվում և չափի պարագա արտահայտող նախադասությունների, բավականին հարուստ համակարգով. մի հանգամանք, որը վկայում է գրաբարի հղկված, կատարելագործված և ճկուն լեզու լինելու մասին։